ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԵԽԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Մարտի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չեխիայի Հանրապետության Խորհրդարանի Պատգամավորների պալատի փոխնախագահ Վոյցեկ Ֆիլիպին:

Հանդիպմանը կարեւորվեց երկու երկրների միջեւ համագործակցության եւ տարբեր ոլորտներում հարաբերությունների աշխուժացումը:

Մասնավոր անդրադարձ կատարվեց երկու երկրների հոգեւոր կյանքին, Եկեղեցի-պետություն, Եկեղեցի-հասարակություն հարաբերություններին եւ հասարակական կյանքում հոգեւոր-բարոյական արժեքների հաստատման գործում կրոնական հաստատությունների կարեւոր դերակատարությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մարտի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրոպական ժողովրդական կուսակցության նախագահ Վիլֆրիդ Մարթենսին:

Վեհափառ Հայրապետը, բարի գալուստ մաղթելով պրն Մարթենսին հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ներկայացրեց Մայր Աթոռի եւ առհասարակ Հայ Եկեղեցու պատմությունն ու դերակատարությունը հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ քրիստոնեական արժեքներին, որոնց վրա խարսխված է նաեւ եւրոպական մշակույթը:

Վիլֆրիդ Մարթենսը, իր հերթին երախտագիտություն հայտնելով ընդունելության համար, ներկայացրեց իր ղեկավարած կուսակցությունը, որն առաջնորդվում է ժողովրդավա-

Հանդիպում Հայոց եկեղեցու Գարեգին Բ կաթողիկոսի
Վեհափառ Տեր Գարեգին Բ կաթողիկոսը ընդունում է Հանրապետական կուսակցության